

**Հեռակա բաժնի ուսանողների շարժի հետ կապված
վարձավճարների կանոնակարգ**

1. Երկրորդ մասնագիտություն ստացող ուսանողը վճարում է այն կուրսի վարձավճարը, որից սկսում է ուսումնառությունը: Ուսուցիչ աշխատող ուսանողն օգտվում է համապատասխան արտոնությունից:
2. Մեր բուհի կամ այլ բուհերի առկա ուսուցումից հեռակա ուսուցման փոխադրվող ուսանողը վճարում է հեռակա ուսուցման տվյալ մասնագիտության համար սահմանված վերջին վարձավճարը: Բացառություն են կազմում մինչև 3 տարեկան երեխա ունեցող և զինծառայությունից վերադարձող ուսանողների փոխադրումները, որոնց դեպքում ուսանողը վճարում է հեռակա ուսուցման տվյալ կուրսի (որում շարունակում է ուսումնառությունը) համար սահմանված վարձավճարը
3. Այլ բուհերի հեռակա ուսուցումից մեր բուհի հեռակա ուսուցման փոխադրվող ուսանողը վճարում է հեռակա ուսուցման տվյալ մասնագիտության համար սահմանված վերջին վարձավճարը:
4. Մեր բուհի և այլ բուհերի առկա կամ հեռակա ուսուցումից հեռացված և հետագայում ուսանողական իրավունքները հեռակա ուսուցման համակարգում վերականգնող ուսանողը վճարում է հեռակա ուսուցման տվյալ մասնագիտության համար սահմանված վերջին վարձավճարը:
5. Նույն կուրսում կրկնակի ուսուցման դեպքում ուսանողը վճարում է տվյալ կուրսի (որում շարունակում է ուսումնառությունը) համար սահմանված վարձավճարը:
6. Տարկետումից վերադարձող ուսանողը վճարում է պայմանագրում նշված վարձավճարը:
7. Մինչև 2004-05 ուս. տարին ընդունված առկա ուսուցման պետպատվերի համակարգից հեռակա ուսուցման փոխադրվող ուսանողը վճարում է տվյալ կուրսի (որում շարունակում է ուսումնառությունը) համար սահմանված վարձավճարը: